

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

- Ա. Թո՛ղ աշխարհ առնէն
Նայելով ինձի՝
Կարեկցի ինձմէն .
- Բ. Շուրթերս կը շարժեմ
Որ լեղուովս բողոք
Բառնամ անձիս դէմ .
- Գ. Մեղքի գող մ'եմ, ո՛վ ,
Կորուստըս գըտայ
Գուք մը փորելով .
- Դ. Դաւ դըրի ինձի ,
Ու խարդաւանքով
Թակարդ լարեցի .
- Ե. Լոյս էի երբեմն ,
Ու հիմա մահուան
Ըստուերին մէջ եմ .
- Զ. Խնչպէս պատմեմ ես
Մեղքերս բազմաթիւ ,
Մեղքերըս պէսպէս .
- Է. Երկինք եւ երկիր ,
Եկէ՛ք ողբացէք ,
Անձըս ախտակիր .
- Ը. Չարն սեպեցի լաւ ,
Ու մեղքերն առնէն
Յանձն առի կամաւ .
- Թ. Անոնց մէջ թաւալ՝
Տիղմով թաթախուած՝
Հնար չէ ինձ դուրս գալ .
- Ժ. Երկար միջոցի
Ախտով ես լըցուած՝
Ժանս հոտ բուրեցի ,
- Ի. Մէկգիշերս ըրի՝
Անքիժ խորհուրդներն
Ու գործերն բարի .
- Լ. Ուզելով անչէջ
Լոյսէն հեռանալ՝
Մնացի մութին մէջ .
- Խ. Երբ հոգիս խաբուած
Չար խորհուրդներէ՝
Կը սուզուի անդարձ
- Ծ. Անդունդներն ի վար ,
Վըրաս կը խնդան
Ծաղրելու համար .
- Կ. Կամաւ կորացած՝
Չե՛մ կրնար կանգնիլ ,
Կարկամ ու հոգած .
- Հ. Մեղքի կրակն էր որ
Այրեց իմ բոլոր
Բարիքս հոգեւոր .
- Ձ. Մեղքը ձաղկեց զիս .
Տեսնողն այպանեց ,
Չանձրացաւ հոգիս .
- Ղ. Լեղին դառնաջուր
Սիրտս ողողելով՝
Ծրագիս մարեց հուր :
- Ճ. Մեղքն ու մահն անջատ
Ճաշակելով ճոխս՝
Այլ քատացայ շա՛տ .
- Մ. Հոգիս անկենդան
Ու միտքս է մոլար ,
Մարմնով կամ միայն .
- Յ. Յանցը մեղսամած
Ինկայ որսողին ,
Ախտերով ընկճած .
- Ն. Նըշաւակ դըրուած
Թըշնամուռն նետին՝
Կ'առնեմ նոր հարուած .
- Շ. Շուներուն վոհմակ
Մի՛շտ կը շաղախուի
Արիւնով* անյագ .
- Ո. Չարին որս եղայ ,
Մեղքի ուռկանով
Անձըս որսաց նա .
- Չ. Վիշտեր չարաչար
Ձիս կը տագնապեն
Ու չունիմ դադար .
- Պ. Մեծ յանցաւորի
Պատժո՞ւն եմ ինկած
Մեղքերու գիրի .
- Ջ. Կը ջանամ զըղջալ ,
Բայց կիրքի կրակով
Կ'ախտանամ դարձեալ .
- Ռ. Ռաբբի կոչուեցայ ,
Այլ վարքս է ռամիկ ,
Անունս է ռակայ .
- Ս. Բարկութեան բոցէն
Վառուած ցանկութիւնք
Սիրտըս կը խոցեն .
- Վ. Յանցանքի վէրքեր
Ցաւ կուտան հոգեւոյս ,
Ժուռ կուգամ վար վեր .
- Տ. Չարերն կը զըրկեն՝
Վըրաս տիրելով՝
Ձիս Տիրոջ զըրկէն .
- Բ. Բաբունուոյն բարի
Չուարթարար ձայնին
Ականջ ես չը դրի .
- Ց. Յանկութիւններ սին
Յանկալի տեսքով
Աչքերս ցաւցուցին .
- Ի. Ու բազմապիսի
Ախտերու հիւսքով
Հոգիս կը հիւծի .
- Փ. Անձն իմ, փութա՛ ալ
Չարիքէն փախչիլ ,
Բարիին ցանկալ .
- Ք. Մահուան քունդ երբ գայ՝
Քեզի մօտ գիտցիր
Դատաւորն անմահ :

ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Իզմիր